

**ԿՈՆՎԵՆՑԻԱ  
ՄԻՋԱՋԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՎԿԻ  
ԿԱԼՍՈՆՆԵՐԻ  
ՄԻԿՍԱԿԱՎԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Գլուխ 1  
Կարգավորման առարկան  
Սահմանումներ**

**ՀՐԴՎԱԾ 1**

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է օդանավով վճարի դիմաց իրականացվող անձանց, ուղեբեղի կամ բեռների ցանկացած միջազգային փոխադրման դեպքում:  
Այն

կիրառվում է նաեւ օդային փոխադրումների ձեռնարկության կողմից իրականացվող հրականացվող

անվճար օդային փոխադրումների դեպքում:

2. Սույն Կոնվենցիայի իմաստով, "միջազգային փոխադրում" արտահայտությունը

նշանակում է ցանկացած փոխադրում, որի ժամանակ, ըստ կողմերի միջեւ կնքված

պայմանագրի դրույթների, մեկնման եւ նշանակման վայրերը, անկախ նրանից, թե փոխադրումն ընթանալու է ընդհատումներով կամ կատարվելու է փոխաբեռնում, թե ոչ,

գտնվում են կամ երկու Բարձր պայմանավորվող կողմերի տարածքում, կամ ել միեւնույն Բարձր պայմանավորվող կողմի տարածքում, եթե նախատեսվող կանգառի վայրը

գտնվում է այլ տերության ինքնիշխանության, ավատիշխանության, մանդատի կամ

տիրապետության ներքո, անգամ եթե այդ տերությունը սույն Կոնվենցիայի կողմ չի

հանդիսանում: Միեւնույն Բարձր պայմանավորվող կողմի ինքնիշխանության, ավատիշխանության, մանդատի կամ տիրապետության ներքո գտնվող տարածքների միջեւ

փոխադրումը, որն իրականացվում է առանց այդպիսի կանգառի, սույն Կոնվենցիայի

իմաստով որպես միջազգային չի դիտարկվում:

3. Մի քանի հաջորդական օդային փոխադրողների միջոցով իրականացվող փոխադրումը սույն Կոնվենցիայի իմաստով համարվում է մեկ միասնական փոխադրում,

եթե կողմերն այն դիտարկել են որպես միասնական գործողություն, անկախ նրանից, թե

այն նախատեսված է եղել մեկ կամ մի շարք պայմանագրերով, թե ոչ, եւ չի գրկվում

իր միջազգային բնույթից այն պատճառով, որ մեկ կամ մի շարք պայմանագրերը պետք ե

ստորագրվեն միեւնույն Բարձր պայմանավորվող կողմի ինքնիշխանության, ավատիշխանության, մանդատի կամ տիրապետության ներքո գտնվող տարածքում:

## ՀՈՂՎԱԾ 2

- Կոնվենցիան կիրառվում է Պետության կամ այլ հանրային-իրավական իրավաբանական անձանց կողմից իրականացվող փոխադրումների նկատմամբ՝ պայմանով, որ այդ փոխադրումներն իրականացվում են համաձայն 1-ին հոդվածով սահմանված կարգի:
- Սույն Կոնվենցիան չի կիրառվում միշագային փոստային կոնվենցիաների հիման վրա իրականացվող փոխադրումների նկատմամբ:

**Գլուխ 2**  
Փոխադրման փաստաթղթեր

**Բաժին 1**  
ՈՒՂԵՒՈՐԻ ՏՈՒՄԸ

## ՀՈՂՎԱԾ 3

- ՈՒՂԵՒՈՐՆԵՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԴԵպքում, ՓՈԽԱԴՐՈՂ պարտավոր Է ՏՈՎ ՏՈՄՄԱՅԻ, որոնք պետք Է պարունակելն հետեւյալ մանրամասն ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
  - ՄԵՐՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՒ ԱՄՍԱԹԻՎԸ,
  - ՄԵԿՆՄԱՆ ԵՒ ՆՉԱՆԱԿՄԱՆ ՎԱՅՐԸ,
  - ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՆԳԱԹՆԵՐԸ՝ պայմանով, որ ՓՈԽԱԴՐՈՂ կարող Է ՎԵՐԱՓԱՀԵԼ անհրաժեշտության դեպքում դրանք փոփոխելու իրավունքը, ԵՒ ՈՐ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱԾՄԱՆ ԱՐՋՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԻ ԱԳԴԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԻՇԱԳԱՅԻՆ ԲՆՈՎՅԹԻ ՎՐԱ, որ փոխադրողի կամ փոխադրողների անվանումը ԵՒ ԻՎԱՑԵՆ, Ե/ ՆՉՈՒՄ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՓՈԽԱԴՐՈՂ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏՈՎԱՀԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ:
- ՏՈՄՄԻ ԲԱԳԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՁՄԱՆ ԱՎԱՐԱՐՈՒՄԸ ԿԱՄ ԿՈՐՈՒՍՄԸ ՀԻ ԱԳԴՈՒՄ ՈՅ ՓՈԽԱԴՐՄԱՆ պայմանագրի գոյության, ոչ ԵԼ ԴՐԱ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՄԻՆՉԴԵՐ ԱՅԴ պայմանագրի նկատմամբ կիրառվում ԵՆ ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԸ:  
Սակայն, Եթե փոխադրողը ուղեւորներին ընդունում Է առանց դրանց տումս հատկացնելու, և այն դրանք չի ունենա վկայակոչելու սույն ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ այն դրույթները, որոնք նրան պատօսիանատվությունից ազատում են կամ սահմանափակում են այն:

**Բաժին 2**  
ՈՒՂԵԲԵՐԻ ՍՏԱԳԱԿԱՆԸ

## ՀՈՂՎԱԾ 4

- ՈՒՂԵԲԵՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԲԱԳԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՄԱՆՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐԻ, ՈՐՈՆՔ

ուղեւորն իր հետ է կրում, փոխադրողը պարտավոր է ուղեբերի ստացական տալ:

2. Ուղեբերի ստացականը կազմվում է երկու օրինակից՝ մեկը ուղեւորի, մյուսը՝ փոխադրողի համար:

3. Ստացականը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

ա/ տրման վայրը եւ ամսաթիվը,

բ/ մեկնման եւ նշանակման վայրը,

գ/ փոխադրողի կամ փոխադրողների անվանումը եւ հասցեն,

դ/ ուղեւորի տոմսի համարը,

ե/ նշում այն մասին, որ ուղեբերի հանձնումը կատարվում է ստացականը ներկայացնող անձին,

զ/ տեղերի քանակը եւ քաշը,

ե/ նշում այն մասին, որ փոխադրումը ենթարկվում է սույն Կոնվենցիայով սահմանված պատասխանատվության վերաբերյալ Կանոններին:

4. Ուղեբերի ստացականի բացակայությունը, անճշտությունը կամ կորուստը չի ազդում ոչ փոխադրման պայմանագրի գոյության, ոչ ել դրա վավերականության վրա,

մինչդեռ այդ պայմանագրի նկատմամբ կիրառվում են սույն Կոնվենցիայով սահմանված

կանոնները: Սակայն, եթե փոխադրողը ուղեբեռն ընդունում է առանց ստացական տալու,

կամ եթե ուղեբերի ստացականը չի պարունակում "դ", "զ" եւ "ե" ենթակետերում նշված տեղեկությունները, նա իրավունք չի ունենա վկայակոչելու սույն Կոնվենցիայի այն դրույթները, որոնք նրան պատասխանատվությունից ազտում են կամ

սահմանափակում են այս:

### Բաժին 3 Օդային բեռնագիրը

#### ՀՐԴՎԱԾ 5

1. Ապրանք փոխադրող ցանկացած անձ կարող է առաքողից պահանջել կազմել ել

իրեն հանձնել փաստաթուղթ, որը կոչվում է "օդային բեռնագիր". յուրաքանչյուր առաքող իրավունք ունի ապրանք տեղափոխող անձից պահանջել ընդունել այս:

2. Սակայն այդ փաստաթուղթի բացակայությունը, անճշտությունը կամ կորուստը չի

ազդում ոչ փոխադրման պայմանագրի գոյության, ոչ ել դրա վավերականության վրա,

մինչդեռ այդ պայմանագրի նկատմամբ կիրառվում են սույն Կոնվենցիայով սահմանված

կանոնները՝ 9-րդ հոդվածով նախատեսված վերապահումով:

#### ՀՐԴՎԱԾ 6

1. Օդային բեռնագիրը առաքողի կողմից կազմվում է երեք բնօրինակից եւ տրվում

Ե ապրանքի հետ միասին:

2. Առաջին օրինակի վրա կատարվում է "փոխադրողի համար" նշումը, այն ստորագրվում է առաքողի կողմից: Երկրորդ օրինակի վրա կատարվում է "ստացողի"

համար" նշումը, այն ստորագրվում է առաքողի եւ փոխադրողի կողմից եւ ուղեկցում է

ապրանքը: Երրորդ օրինակը ստորագրվում է փոխադրողի կողմից եւ վերադարձվում է

առաքողին ապրանքն ստանալուն պես:

3. Փոխադրողը իր օրինակը ստորագրում է անմիջապես ապրանքն ստանալուն պես:

4. Փոխադրողի ստորագրությունը կարող է փոխադրինվել կնիքով, առաքողի ստորագրությունը կարող է լինել տպագիր կամ նույնպես փոխադրինվել կնիքով:

5. Եթե առաքողի պահանջով օդային բեռնագիրը կազմում է փոխադրողը, վերջինս

համարվում է առաքողի անունից գործող՝ մինչեւ հակառակն ապացուցելը:

## ՀՐԴՎԱԾ 7

Ապրանք փոխադրողն իրավունք ունի առաքողից պահանջելու կազմել մի քանի օդային բեռնագրեր, եթե տեղերի քանակը մեկից ավել է:

## ՀՐԴՎԱԾ 8

Օդային բեռնագիրը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

ա/ կազմելու վայրը եւ ամսաթիվը,

բ/ մեկնման եւ նշանակման վայրը,

գ/ նախատեսված կանգառները՝ պայմանով, որ փոխադրողը կարող է վերապահել անհրաժեշտության դեպքում դրանք փոփոխելու իրավունքը, եւ որ այդ իրավունքի կիրառման արդյունքում կատարված փոփոխությունը չի ազդի փոխադրման միջազգային ընույթի վրա,

դ/ առաքողի անվանումը եւ հասցեն,

ե/ ստացողի անվանումը եւ հասցեն, եթե նշված է,

զ/ ապրանքների ընույթը,

է/ տեղերի քանակը, փաթեթավորումը, տեղերի նշմարումը կամ համարները,

ը/ ապրանքների քաշը, քանակը կամ չափսերը,

թ/ ապրանքների եւ դրանց փաթեթավորման արտաքին տեսքը,

ժ/ փոխադրման արժեքը, եթե այդպիսին նախատեսված է, վճարման վայրը եւ ամսաթիվը, վճարող անձը,

ժա/ եթե ապրանքների առաքումն իրականացվում է վերադիր վճարով՝ ապրանքների

արժեքը եւ, անհրաժեշտության դեպքում, ծախսերի գումարը,

ժթ/ 22-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան հայտարարված արժեքը,

ժզ/ օդային բեռնագրերի օրինակների քանակը,

ժդ/ օդային բեռնագրի հետ միասին փոխադրողին տրված փաստաթղթերը,

ժե/ փոխադրման ժամկետը եւ ընդհանուր տեղեկություններ երթուղու մասին, եթե

այն համաձայնեցված է,

ժգ/ նշում այն մասին, որ փոխադրումը ենթարկվում է սույն Կոնվենցիայով սահմանված պատասխանատվության վերաբերյալ կանոններին:

## ՀՐԴՎԱԾ 9

Եթե փոխադրողն ապրանքներն ընդունում է առանց օդային բեռնագիր կազմելու,  
կամ եթե բեռնագիրը չի պարունակում 8-րդ հոդվածի "ա"-ից "ը" եւ.../  
Ենթակետերում նշված տեղեկությունները, ևա իրավունք չի ունենա վկայակոչելու  
սույն Կոնվենցիայի այս դրույթները, որոնք նրան պատասխանատվությունից  
ազատում  
Են կամ սահմանափակում են այն:

### ՀՈԴՎԱԾ 10

1. Առաքողը պատասխանատվություն է կրում ապրանքի վերաբերյալ օդային  
բեռնագրում իր կողմից լրացվող տեղեկությունների ճշտության եւ  
արժանահավատության համար:
2. Առաքողը պատասխանատվություն է կրում իր կողմից տրված  
տեղեկությունների  
անճշտության, անարժանահավատության կամ թերի լինելու պատճառով  
փոխադրողին կամ  
որեւէ այլ անձին հասցված ցանկացած վնասի համար:

### ՀՈԴՎԱԾ 11

1. Օդային բեռնագիրը prima facie հանդիսանում է պայմանագրի կնքման,  
ապրանքների ստացման եւ փոխադրման պայմանների հաստատում:
2. Օդային բեռնագրում ապրանքների քաշի, չափսերի, փաթեթավորման,  
ինչպես  
նաեւ տեղերի քանակի մասին նշված տեղեկությունները prima facie հանդիսանում  
են  
որպես նշված տեղեկությունների հաստատում. ապրանքների քանակի,  
ծավալների եւ  
վիճակի մասին տեղեկությունները չեն փաստում փոխադրողի դեմ, քանի որ  
վերջինիս  
կողմից առաքողի ներկայությամբ կատարվել է ապրանքների ստուգում, ինչի  
մասին  
նշվել է օդային բեռնագրում, կամ քանի որ դրանք վերաբերում են միայն  
ապրանքների  
արտաքին վիճակին:

### ՀՈԴՎԱԾ 12

1. Փոխադրման պայմանագրով սահմանված բոլոր պարտավորությունների  
կատարման  
պայմանով, առաքողն իրավունք ունի տնօրինել ապրանքները՝ դրանք հետ  
վերցնելով  
մեկնման կամ նշանակման օդանավակայանից, կանգնեցնելով երթուղու վրա  
կատարվող  
վայրեցքի ժամանակ, ցուցում տալով նշանակման վայրում դրանք հանձնել որեւէ  
այլ  
անձի, քան օդային բեռնագրում նշված անձը, կամ ել պահանջելով դրանք  
վերադարձնել  
մեկնման օդանավակայան, քանի դեռ այդ իրավունքի իրականացումը վնաս չի  
հասցնում

ոչ փոխադրողին, ոչ էլ այլ առաջողներին, ստանձնելով դրանից բխող ծախսերի փոխատուցման պարտավորությունը:

2. Այս դեպքերում, երբ առաջողի ցուցումների կատարումն անհնար է, փոխադրողը

պարտավոր է անմիջապես նրան այդ մասին տեղեկացնել:

3. Եթե փոխադրողը ենթարկվում է ապրանքների տևորինման վերաբերյալ առաջողի

ցուցումներին առանց վերջինիս տրված օդային բեռնագրի օրինակը ներկայացնելու

պահանջի, նա պատասխանատվություն է ստանձնում, առաջողին հետպահանջ ներկայացնելու իր իրավունքի պահպանմամբ, այն վետայի համար, որը կարող է դրանով

հասցել օդային բեռնագրի օրինական տիրոջը:

4. Առաջողի իրավունքները դադարում են գործել ստացողի իրավունքների 13-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու պահից: Սակայն, եթե ստացողը իրաժարվում է ընդունել բեռնագիրը կամ ապրանքները, կամ եթե դրանք հնարավոր չեն

առաջինիս հանձնել, ապա առաջողը կրկին վերականգնում է տևորինման իր իրավունքը:

### ՀՈԴՎԱԾ 13

1. Բացառությամբ նախորդ հոդվածով նախատեսված դեպքերի, ստացողը, նշանակման

վայր ապրանքների ժամանման պես, իրավունք ունի փոխադրողից պահանջնելու իրեն

հանձնել օդային բեռնագիրը եւ ապրանքները՝ օդային բեռնագրում նշված պահանջների

եւ փոխադրման պայմանների կատարման համար վճարման ենթակա գումարների վճարման

դիմաց:

2. Եթե այլ կերպ պայմանավորված չէ, փոխադրողը պարտավոր է ապրանքի ժամանման

մասին անմիջապես տեղեկացնել ստացողին:

3. Եթե փոխադրողն ընդունում է ապրանքների կորուստի փաստը, կամ եթե ապրանքների ժամանման համար նախատեսված ժամկետից յոթ օրվա ընթացքում ապրանքը չի

ժամանում, ստացողն իրավունք ունի փոխադրողի նկատմամբ իրականացնել փոխադրման

պայմանագրով սահմանված իր իրավունքները:

### ՀՈԴՎԱԾ 14

Առաջողը եւ ստացողը կարող են իրականացնել 12-րդ եւ 13-րդ հոդվածներով իրենց վերապահված բոլոր իրավունքները՝ յուրաքանչյուրս իր անունից, անկախ նրանից, թե գործում են սեփական շահերից ելնելով, թե՝ մեկը մյուսի, պայմանով, որ երկուսն ել կատարում են պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները:

### ՀՈԴՎԱԾ 15

1. 12-րդ, 13-րդ եւ 14-րդ հոդվածների դրույթները որեւէ կերպով չեն ազդում ոչ առաքողի եւ ստացողի հարաբերությունների վրա, ոչ էլ որեւէ երրորդ անձանց հարաբերությունների վրա, որոնց իրավունքները բխում են կամ առաքողից, կամ էլ ստացողից:

2. Եթե 12-րդ, 13-րդ եւ 14-րդ հոդվածի դրույթները այլ կերպ են կիրառվում, այդ մասին պարտադիր նշում է կատարվում օդային բեռնագրում:

### ՀՈԴՎԱԾ 16

1. Առաքողը պարտավոր է տրամադրել այնպիսի տեղեկություններ եւ օդային բեռնագրին կից ներկայացնել այնպիսի փաստաթղթեր, որոնք, մինչեւ պարանքները

ստացողին հանձնելը, կարող են պահանջվել մաքսային, ներքին մաքսային եւ ոստիկանական ձեւակերպումների իրականացման համար: Առաքողը պատասխանատվություն է

կրում փոխադրողի նկատմամբ բոլոր այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ

այդ տեղեկությունների եւ փաստաթղթերի բացակայության, թերի լինելու կամ անճշտության պատճառով՝ բացառությամբ փոխադրողի կամ իր կողմից լիազորված անձանց

մեղքով առաջացած վնասների:

2. Փոխադրողը պարտավոր չի ստուգել այդ տեղեկությունների եւ փաստաթղթերի

ճշտությունը եւ ամբողջականությունը:

### ԳԼՈՒԽ 3 Փոխադրողի պարտականությունները

### ՀՈԴՎԱԾ 17

Փոխադրողը պատասխանատվություն է կրում այն վնասների համար, որոնք առաջացել

են ուղեւորի մահվան, վիրավորման կամ այլ մարմնական վնասվածքներ հասցելու

պատճառով, եթե դժբախտ պատահարը, որի հետեւանքով առաջացել է վնասը, տեղի է

ունեցել օդանավի մեջ կամ նստեցման կամ ցած իշեցման գործողությունների ժամանակ:

### ՀՈԴՎԱԾ 18

1. Փոխադրողը պատասխանատվություն է կրում այն վնասների համար, որոնք առաջացել են գրանցված ուղերեսի կամ ապրանքների ոչնչացման, կորուստի կամ վնասվելու պատճառով, եթե պատահարը, որի հետեւանքով առաջացել է վնասը, տեղի է

ունեցել օդային փոխադրման ընթացքում:

2. Նախորդ հոդվածի իմաստով, օդային փոխադրումը ներառում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում ուղերեսը կամ ապրանքները գտնվում են փոխադրողի

պահպանության ներքո, անկախ նրանից, թե որտեղ է այդ պահպանումն իրականացվում՝  
օդանավակայանում, օդանավի մեջ կամ որեւէ այլ վայրում՝ օդանավակայանի  
տարածքից  
դուրս վայրէջք կատարելու դեպքում:

3. Օդային փոխադրման ժամանակահատվածն իր մեջ չի ներառում  
օդանավակայանի  
տարածքից դուրս իրականացվող որեւէ ցամաքային, ծովային կամ գետային  
փոխադրում:  
Սակայն եթե այդպիսի փոխադրումն իրականացվում է համաձայն օդային  
փոխադրման  
պայմանագրի բեռնման, հանձնման կամ փոխաբեռնման նպատակով, ցանկացած  
վեսա,  
մինչեւ հակառակը չապացուցվի, համարվում է օդային փոխադրման ընթացքում  
տեղի  
ունեցած պատահարի հետեւանքով առաջացած:

### ՀՈԴՎԱԾ 19

Փոխադրողը պատասխանատվություն է կրում ուղեւորների, ուղեբերի կամ  
ապրանքների օդային փոխադրման ժամանակ տեղի ունեցած ուշացման  
հետեւանքով  
առաջացած վնասների համար:

### ՀՈԴՎԱԾ 20

1. Փոխադրողը պատասխանատվություն չի կրում, եթե ապացույցներ է  
ներկայացնում, որ ինքը եւ իր գործակալները ձեռնարկել են բոլոր անհրաժեշտ  
միջոցները վնասներից խուսափելու համար կամ որ այդպիսի միջոցներ  
ձեռնարկելն  
անհնար եր:  
2. Ապրանքներ եւ ուղեբեր տեղափոխելիս, փոխադրողը  
պատասխանատվություն չի  
կրում, եթե ապացույցներ է ներկայացնում, որ վնասներն առաջացել են օդանավն  
անփոլյթ վարելու կամ նավագնացության մեջ թույլ տրված սխալների  
հետեւանքով, եւ  
որ բոլոր այլ առումներով ինքն ու իր գործակալները ձեռնարկել են բոլոր  
անհրաժեշտ միջոցները:

### ՀՈԴՎԱԾ 21

Եթե փոխադրողն ապացույցներ ներկայացնի, որ վնասներն առաջացել են  
տուժող  
անձի անփոլության հետեւանքով, կամ այդ անձի անփոլությունը նպաստել է  
վնասների առաջացմանը, դատարանը կարող է փոխադրողին ազատել  
պատասխանատվությունից կամ սահմանափակել այն՝ իր օրենսդրության  
դրույթներին  
համապատասխան:

### ՀՈԴՎԱԾ 22

1. Ուղեւորների փոխադրման դեպքում, յուրաքանչյուր ուղեւորի նկատմամբ փոխադրողի պատասխանատվությունը սահմանափակվում է հարյուր քսանինգ հազար ֆրանկ

գումարով: Եթե հայցի ներկայացման դատարանի օրենքի համաձայն վնասների փոխատուցումը կարող է կատարվել պարբերական վճարումների տեսքով, ապա այդ

վճարումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի հարյուր քսանինգ հազար

ֆրանկը: Սակայն, փոխադրողի հետ հատուկ պայմանագիր կնքելով, ուղեւորը կարող է

սահմանել պատասխանատվության ավելի բարձր աստիճան:

2. Գրանցված ուղերեր եւ ապրանքներ տեղափոխելիս, փոխադրողի պատասխանատվությունը սահմանափակվում է երկու հարյուր հիսուն ֆրանկ գումարով՝

յուրաքանչյուր կիլոգրամի համար, բացառությամբ այս դեպքերի, երբ փաթեթը փոխադրողին հանձնելու պահին առաջողը հայտարարություն է անում առաքման կարեւորության մասին եւ վճարում է հնարավոր լրացուցիչ վճարները: Այս դեպքում

փոխադրողը պարտավոր է վճարել հայտարարված գումարը չգերազանցող գումար, եթե ևա

չապացուցի, որ այդ գումարը գերազանցում է առաջողի իրական առաքման կարեւորությունը:

3. Ուղեւորի ուղեկցող բեռի նկատմամբ փոխադրողի պատասխանատվությունը սահմանափակվում է իննական հազար ֆրանկ գումարով՝ յուրաքանչյուր ուղեւորի համար:

4. Վերը նշված գումարներն արտահայտված են ֆրանսիական ֆրանկով, որը բաղկացած է իննը հարյուր հազարերորդական հարգի վաթունինգ ու կես միլիգրամ

ոսկուց: Գումարները կարող են արտահայտված լինել ցանկացած այլ արտարժույթով՝

թվերի կլորացմամբ:

### ՀՐԴՎԱԾ 23

Յանկացած դրույթ, որը ծգտում է փոխադրողին ազատել պատասխանատվությունից

կամ սահմանել պատասխանատվության ավելի ցածր սահմանագիծ, քան սույն Կոնվենցիայով նախատեսվածը, համարվում է անվավեր եւ որեւէ հետեւանքներ չի առաջացնում, սակայն այդ դրույթի անվավերությունը առաջ չի բերում ամբողջ պայմանագրի անվավեր ճանաչելը, եւ դրա նկատմամբ շարունակ կիրառելի են մնում

սույն Կոնվենցիայի դրույթները:

### ՀՐԴՎԱԾ 24

1. 18-րդ եւ 19-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, վնասներ պատճառելու

համար պատասխանատվության ենթարկելու հայցը, անկախ նրանից, թե ինչպես է այս

հիմնավորված, կարող է հարուցվել միայն սույն Կոնվենցիայով սահմանված պահանջներին եւ սահմանագծերին համապատասխան:

2. 17-րդ հոդվածով նախատեսված դեպքերում նույնպես կիրառվում են նախորդ կետի դրույթները՝ առանց խախտելու հայց հարուցելու իրավունք ունեցող անձանց  
շրջանակը սահմանող դրույթը եւ այդ անձանց պատասխանատու իրավունքները:

### ՀՈԴՎԱԾ 25

1. Փոխադրողն իրավունք չունի ի օգուտ իրեն վկայակոչելու սույն Կոնվենցիայի այն դրույթները, որոնք իրեն ազատում են պատասխանատվությունից կամ սահմանափակում են այն, եթե վնասները պատճառվել են կանխամտածված սխալ վարքի  
հետեւանքով, կամ այնպիսի մեղքի հետեւանքով, որը հայցի հարուցման դատարանի  
օրենքների համաձայն դիտարկվում է որպես կանխամտածված սխալ վարքին հավասարագոր:

2. Փոխադրողը նաեւ իրավունք չունի ի օգուտ իրեն վկայակոչելու սույն Կոնվենցիայի նշված դրույթները, եթե վնասները պատճառվել են իր աշխատանքային  
պարտականությունների շրջանակներում գործող՝ փոխադրողի գործակալի գործողությունների հետեւանքով;

### ՀՈԴՎԱԾ 26

1. Եթե ստացողը ուղերեսն ու ապրանքներն ստանալիս որեւէ բողոք չի հարուցում, դա prima facie նշանակում է, որ ապրանքներն առաքվել են լավ վիճակում եւ փոխադրման փաստաթղթին համապատասխան:

2. Բերի վնասված լինելու դեպքում, ստացողը, վնասվածը հայտնաբերելուց անմիջապես հետո՝ բերը ստանալուց հետո երօյա ժամկետում, բողոք է ուղղում առաքողին: Ուշացման դեպքում բողոքը կարող է հարուցվել ոչ ուշ, քան ուղերեսը կամ ապրանքներն իր տնօրինմանը հանձնելու պահից տասնչորս օրվա ընթացքում:

3. Բողոքը պետք է կատարվի գրավոր՝ փոխադրման փաստաթղթի մեջ կամ առանձին փաստաթղթի տեսքով, որը ենթակա է ուղարկման վերը նշված ժամկետներում:

4. Նշված ժամկետներում բողոքը չներկայացնելու դեպքում փոխադրողի դեմ հարուցված հայցերը չեն ընդունվում, բացառությամբ վերջինիս կողմից խարդախություններ գործելու դեպքերի:

### ՀՈԴՎԱԾ 27

Պատասխանատվություն կրող անձի մահվան դեպքում սույն Կոնվենցիայով նախատեսված պատասխանատվությունը ստանձնում են առաջինիս իրավահաջորդները:

### ՀՈԴՎԱԾ 28

1. Պատճառված վնասների համար հայցը հարուցվում է, հայցվորի ընտրությամբ,  
Բարձր պայմանավորվող կողմերից մեկի տարածքում, փոխադրողի բնակության վայրի

դատարանում, փոխադրողի ձեռնարկության կենտրոնական գրասենյակի գտնվելու վայրում  
կամ այն վայրում, որտեղ փոխադրողն ունի գրասենյակ, որի միջոցով կնքվել է պայմանագիրը, կամ էլ նշանակման վայրի դատարանում:  
2. Դատական ընթացակարգերը սահմանվում են համաձայն այն դատարանի օրենքների,  
որտեղ հայցը հարուցվել է:

### ՀՐՈՎԱԾ 29

1. Պատճառված վնասների համար հայց հարուցելու իրավունքը դադարում է գործել, եթե հայցը չի հարուցվում նշանակման վայր ժամանելու, օդանավի նախատեսված ժամանման կամ փոխադրման ավարտի պահից երկու տարվա ընթացքում:

2. Ժամկետի հաշվարկման կարգը սահմանվում է հայցի հարուցման դատարանի  
օրենքին համապատասխան:

### ՀՐՈՎԱԾ 30

1-ին հոդվածի 3-րդ կետով սահմանված փոխադրումների դեպքում, որոնք իրականացվում են մի քանի հաջորդական փոխադրողների կողմից, ուղեւորներ,  
ուղերեր

կամ ապրանքներ ընդունող յուրաքանչյուր փոխադրողի նկատմամբ գործում են սույն

Կոնվենցիայով սահմանված կանոնները եւ, նա համարվում է փոխադրման պայմանագիր

պայմանավորվող կողմերից մեկը, քանի որ Նշված պայմանագիրը առնչվում է փոխադրման

այն հատվածին, որն իրականացվում է իր հսկողության ներքո:

Նման փոխադրումների դեպքերում, ուղեւորը կամ նրա լիազոր ներկայացուցիչը կարող են հայց հարուցել միայն այն փոխադրողի դեմ, որի կողմից իրականացվող փոխադրման ընթացքում է տեղի ունեցել դժբախտ պատահարը կամ ուշացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ պայմանավորվածության համաձայն առաջին

փոխադրողը պատասխանատվություն է կրում ամբողջ փոխադրման համար:

Ուղերերի կամ ապրանքների դեպքում, առաքողը կարող է հայց հարուցել առաջին

փոխադրողի դեմ, իսկ ուղեւորը կամ ստացողը՝ վերջինի դեմ, ինչպես նաև երկուսն

Ել կարող են հայց հարուցել այն փոխադրողի դեմ, որի կողմից իրականացվող փոխադրման ընթացքում տեղի են ունեցել ոչնչացումը, կորուստը, վնասումը կամ ուշացումը: Այդ փոխադրողները կոլեկտիվ պատասխանատվություն են կրում առաքողի եւ

ստացողի նկատմամբ:

### Գլուխ 4

#### Համակցված փոխադրումների վերաբերյալ դրույթներ

### ՀՐՈՎԱԾ 31

1. Այն փոխադրումների նկատմամբ, որոնք մասամբ իրականացվում են փոխադրման որեւէ այլ եղանակով, սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են միայն օդային փոխադրման հատվածի մասով՝ պայմանով, որ վերջինս համապատասխանում է 1-ին

հոդվածով սահմանված պայմաններին:

2. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ համակցված փոխադրման դեպքում կողմերին

չի արգելում օդային բեռնագրում ներառել փոխադրման այլ ձեւերին վերաբերող պայմանները՝ պայմանով, որ սույն Կոնվենցիայի դրույթները կկիրառվեն միայն օդային փոխադրման նկատմամբ:

#### Գլուխ 5 Ընդհանուր Եւ Եզրափակիչ դրույթներ

### ՀՈԴՎԱԾ 32

Փոխադրման պայմանագրի ցանկացած դրույթ եւ միևնույն վնասների առաջացման պահը գործող ցանկացած համաձայնագիր, որի կիրառմամբ կողմերը խախտում են սույն Կոնվենցիայի դրույթները՝ սահմանելով կիրառվելիք օրենքը կամ փոփոխելով իրավագործության իրականացման կանոնները, համարվում են ուժը կորցրած: Սակայն

ապրանքների փոխադրման դեպքերում, սույն Կոնվենցիայի շրջանակներում, թույլատրվում է իրավարարության դրույթների կիրառումը, եթե իրավարարությունը

տեղի է ունենում 28-րդ հոդվածի 1-ին կետում նշված դատարանների իրավագործության ներքո գտնվող վայրերում:

### ՀՈԴՎԱԾ 33

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ փոխադրողին չի արգելում իրաժարվել փոխադրման պայմանագիր կնքելուց կամ սահմանել սույն Կոնվենցիայի դրույթներին չհակասող կանոններ:

### ՀՈԴՎԱԾ 34

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում ինչպես կանոնավոր օդային ուղիների ստեղծման նպատակով օդային նավագնացության ձեռնարկությունների կողմից

իրականացվող փորձնական միջազգային օդային փոխադրումների, այնպես ել օդային

փոխադրողի սովորական գործառույթների շրջանակից դուրս՝ արտակարգ հանգամանքներում իրականացվող փոխադրումների նկատմամբ:

### ՀՈԴՎԱԾ 35

Սույն Կոնվենցիայի իմաստով, "օրեր" արտահայտությունը նշանակում է օրերը՝ իրենց բնական հաջորդականությամբ, այլ ոչ թե աշխատանքային օրերը:

### ՀՐԴՎԱԾ 36

Սույն Կոնվենցիան կատարված է մեկ օրինակից, ֆրանսերեն, որն ի պահ է հանձնվում Լեհաստանի արտաքին գործերի նախարարության արխիվներին, իսկ սահմանված կարգով հաստատված պատճենը Լեհաստանի Կառավարության կողմից ուղարկվում է բոլոր Բարձր պայմանավորվող կողմերին:

### ՀՐԴՎԱԾ 37

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Լեհաստանի արտաքին գործերի նախարարության արխիվներին, որն ի պահ հանձնելու մասին տեղեկացնում է Բարձր պայմանավորվող կողմերի Կառավարություններին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ Բարձր պայմանավորվող կողմերի համար՝ վերջիններիս կողմից այն վավերացնելու պահից՝ հինգերորդ վավերագիրն ի պահ հանձնելու պահից ինսուներորդ օրը: Ապա Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի եւ իր վավերագիրն ի պահ հանձնող Բարձր պայմանավորվող կողմի համար՝ ի պահ հանձնելու պահից ինսուներորդ օրը:

3. Լեհաստանի Յանրապետության կառավարությունը ծանուցում է Բարձր պայմանավորվող կողմերի կառավարություններին սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու եւ յուրաքանչյուր վավերագրի ի պահ հանձնման ամսաթվի մասին:

### ՀՐԴՎԱԾ 38

1. Ուժի մեջ մտնելու պահից սույն Կոնվենցիային կարող է միանալ ցանկացած պետություն:

2. Միացումը կատարվում է Լեհաստանի Յանրապետության Կառավարության ուղղված ծանուցման միջոցով, որն այդ մասին տեղեկացնում է Բարձր պայմանավորվող կողմերի Կառավարություններին:

3. Միացումն ուժի մեջ է մտնում Լեհաստանի Յանրապետության Կառավարության կողմից կատարված ծանուցման պահից ինսուներորդ օրը:

### ՀՐԴՎԱԾ 39

1. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ այդ մասին ծանուցում ուղղելով Լեհաստանի Յանրապետության Կառավարությանը, որն ապա այդ մասին տեղեկացնում է Բարձր պայմանավորվող կողմերի Կառավարություններին:

2. Հեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում դրա մասին ծանուցելու պահից  
վեց  
ամիս հետո եւ միմիայն չեղյալ հայտարարող կողմի համար:

#### ՀՈԴՎԱԾ 40

1. Բարձր պայմանավորվող կողմերը ստորագրման, վավերագրերն ի պահ  
հանձնելու  
կամ միանալու պահին կարող են հայտարարել, որ սույն Կոնվենցիայի դրույթները  
չեն

տարածվելու իրենց բոլոր գաղութների կամ դրանց մի մասի, իրենց  
պրոտեկտորատների,  
Ենթամանդատային տարածքների կամ իրենց ինքնիշխանության,  
տիրապետության կամ

ավատիշխանության ներքո գտնվող այլ տարածքների վրա:

2. Նետագայում ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է միանալ  
առանձին՝

իրենց բոլոր գաղութների կամ դրանց մի մասի, իրենց պրոտեկտորատների,  
Ենթամանդատային տարածքների կամ իրենց ինքնիշխանության,  
տիրապետության կամ

ավատիշխանության ներքո գտնվող այլ տարածքների անունից, որոնք  
սկզբնապես

ներառված չեն վերը նշված հայտարարության մեջ:

3. Նրանք կարող են նաեւ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան  
չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ առանձին կամ իրենց բոլոր գաղութների  
կամ

դրանց մի մասի, իրենց պրոտեկտորատների, Ենթամանդատային տարածքների  
կամ իրենց

ինքնիշխանության, տիրապետության կամ ավատիշխանության ներքո գտնվող  
այլ

տարածքների համար:

#### ՀՈԴՎԱԾ 41

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ոչ շուտ, քան սույն  
Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից երկու տարի հետո, նախաձեռնել նոր  
միջազգային համաժողովի կազմակերպում՝ քննարկելու համար այն  
փոփոխությունները  
Եւ լրացումները, որոնք կարող են կատարվել սույն Կոնվենցիայում՝ վերջինիս  
կատարելագործման նպատակով: Դրա համար Կողմը պետք է դիմի ֆրանսիայի  
Շանքապետության Կառավարությանը, որը եւ կձեռնարկի նշված համաժողովի  
նախապատրաստման համար անհրաժեշտ միջոցները:

Սույն Կոնվենցիան, որը կատարված է Վարշավայում՝ 1929 թվականի  
հոկտեմբերի

12-ին, բաց է ստորագրման համար մինչեւ 1930 թվականի հունվարի 31-ը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
/2-րդ հոդվածի վերաբերյալ/

Բարձր պայմանավորվող կողմերն իրավունք են վերապահում վավերացման կամ  
միանալու պահին հայտարարել, որ սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվելու անմիջապես Պետության, իր գաղութների, պրոտեկտորատների, Ենթամանդատային տարածքների կամ իր ինքնիշխանության,  
տիրապետության կամ ավատիշխանության ներքո գտնվող այլ տարածքների կողմից  
իրականացվող միջազգային օդային փոխադրումների նկատմամբ:

\* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի փետրվարի 23-ից: